ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27 մարտի 2014թ., Բրյուսել

# Հարևանությունը ճանապարհների խաչմերուկում. մարտահրավերների տարվա գնահատականը

ԵՄ տարեկան զեկույցը Հարևանության քաղաքականության (ՀՔ) իրականացման մասին խառը պատկեր է ներկայացնում: Թեև որոշ գործընկեր երկրների համար 2013 թվականը ճգնաժամային էր, նպաստում էր քաղաքական անկայունությանը և բարդ սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմանը, ԵՄ-ն շարունակում էր տրամադրել ժողովրդավարական կառավարմանը, անվտանգության ամրապնդմանն ու կայուն և համակողմանի զարգացման խթանմանն ուղղված իր աջակցությունը: Երբ «հարևանության» մի շարք երկրներում իրականացվում էին քաղաքական և տնտեսական կարևորագույն բարեփոխումներ, այլ երկրներում անցյալում ձեռքբերված ժողովրդավարական բարեփոխումներն ու տնտեսական առողջացումը վտանգվել էին ազգային և տարածաշրջանային անվտանգության մարտահրավերների ճնշման տակ:

### ԵՄ-ն պահպանել է փոխգործակցությունն իր գործընկերների հետ

ԵՀՔ-ն, իր բոլոր քաղաքական գործիքներով, շարունակում է մնալ այն հարթակը, որում Եվրամիությունը աշխատում է իր գործընկերների հետ՝ ժողովրդավարության ձևավորման, կայուն և համակողմանի տնտեսական զարգացման խթանման և անվտանգության ամրապնդման ուղղություններով:

ԵՄ անվտանգության քաղաքականության և արտաքին գործերի բարձր ներկայացուցիչ Եվրահանձնաժողովի փոխնախագահ՝ Քեթրին Էշթոնի և Եվրամիության ընդլայնման և

Contacts :
Maja Kocijancic (+32 2 298 65 70)
Michael Mann (+32 2 299 97 80)
Peter Stano (+32 2 295 74 84)
Anca Paduraru (+32 2 296 64 30)
Nabila Massrali (+32 2 296 92 18)
Eamonn Prendergast (+32 2 299 88 51)

For the public: **Europe Direct** by phone **00 800 6 7 8 9 10 11** or by e-mail

հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար՝ Շտեֆան Ֆյուլեի կողմից ներկայացված ԵՀՔ տարեկան փաթեթը, ընդգծում է, որ Քաղաքականության հաջողությունը կախված է կառավարությունների կողմից բարեփոխումներ իրականացնելու կարողություններից և հանձնառություններից:

*«Փոխգործակցությունը հարևանների հետ բացարձակ առաջնահերթություն է ԵՄ-ի համար: Եվրոպական հարևանության քաղաքականությունը թույլ է տալիս մեզ արձագանքել այն մարտահրավերներին, որոնք ծառացած են մեր գործընկերների առջև՝ միաժամանակ պաշտպանելով Եվրամիության շահերը: ԵՀՔ-ն նպատակ ունի կանխարգելել և լուծել առկա հակամարտությունները, այն խթաններ է նախատեսում մեր հարևանների համար, դեպի քաղաքական և տնտեսական բարեփոխումներ տանող ճանապարհին», ասել է Քեթրին Էշթոնը փաթեթի հրապարակումից հետո:*

Զեկույցները ցույց են տալիս, որ գործընկեր երկրների մարտահրավերները գնալով առավել բազմազան են դառնում: Դա նշանակում է, որ Քաղաքականությունը պետք է առավել հստակ արտացոլի յուրաքանչյուր գործընկեր երկրի ակնկալիքներն ու կարիքները՝ միաժամանակ առաջարկելով երկարաժամկետ հատվածում Եվրամիության հետ նրանց քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման տեսլականները:

*«Վերջին ամիսներին տեղի ունեցած իրադարձությունները ցույց են տվել, որ մեր հարևանները դեռ գտնվում են այնպիսի տարածաշրջանում, որտեղ ԵՄ-ն պետք է կենտրոնացնի իր ուշադրությունն ու ռեսուրսները: Կյանքի ավելի լավ պայմանների ապահովման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համատարած ցանկությունը դեռ շատ ուժեղ է և քանի դեռ բարեփոխումների ցանկությունը չի կարող դրսից պարտադրվել, ԵՄ-ն հատուկ պատասխանատվություն է ստանձնել աջակցելու այն գործընկեր երկրներին, որոնք հանձնառու են անցնելու դեպի ժողովրդավարություն և առավել մասնակցային հասարակություն տանող բարդ ճանապարհը: Միջանձնային անմիջական կապերի, քաղաքացիների համար ճամփորդելու և կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու և համայնքների միջև փոխգործակցային (գործնական, գիտական, կրթական, արվեստագիտական, մշակութային և այլ) հարաբերությունների ստեղծման և քաղաքացիական հասարակությանն աջակցելու միջոցով՝ Եվրամիության քաղաքականությունը կարող է որոշիչ դեր խաղալ այդ գործընթացում»,* ավելացրել է ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:

**Բարեփոխման հանձնառությունների կատարման ընթացքն անհամաչափ էր**

Եթե նայենք դեպի հարավ, ապա Թունիսում անցումը դեպի ժողովրդավարություն տեղի էր ունենում միայն ընդգրկուն երկխոսության շնորհիվ՝ անտեսելով անվտանգության լուրջ սպառնալիքները: 2014թ-ի հունվարին, ձեռք բերված փոխհամաձայնությամբ, նոր սահմանադրության ընդունումը՝ զգալի քայլ էր դեպի ժողովրդավարություն: Մորոկոյում, 2011թ-ի բարեփոխված սահմանադրությամբ նախատեսված հանձնառությունների իրականացումը դանդաղել էր, թեև միգրացիոն քաղաքականության և ռազմական

արդարադատության բարեփոխումները դրական քայլեր էին: Եգիպտոսում, քաղաքական զարգացումները բնութագրվում էին քաղաքական անվստահությամբ ու բևեռացմամբ. հավաքների ազատությունը և մամուլի ազատությունը կորսված էին: Լիբիան կանգնած է անվտանգության լուրջ և խորացող մարտահրավերների առջև, որոնք խաթարում են բնակչության հաշտեցումը և քաղաքական կայունությունը: Լիբանանը և Հորդանանը պայքարում են, Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով, իրենց քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերի վրա թողած ազդեցությունների դեմ, ինչը մեծապես նվազեցրել է քաղաքական և կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու ներուժը այդ երկրներում: Իսրայելը և Պաղեստինը վերսկսել են խաղաղ բանակցությունները, բայց դեռ լուրջ խոչընդոտների են բախվում:

ԵՀՔ արևելյան երկրներում, մասնավորապես Ուկրաինայում, ակնթարթային փոփոխություններ եղան, ԵՄ քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման նպատակներով դրդված բնակչության մասայական բողոքներով (այսպես կոչված՝ «Եվրամայդանում»): Եվրամիությունը պատրաստակամ է օգնելու Ուկրաինային՝ ժողովրդավարական և բարգավաճ ապագա կառուցելու ճանապահին: 2014թ-ի մարտի 5-ին, Հանձնաժողովը հայտարարել է միջոցառումների փաթեթի տրամադրման մասին, որն ընդգրկում է 11 միլիարդ եվրո ֆինանսական բազմամյա աջակցություն: 2014թ-ի մարտի 21-ին, Բրյուսելում, ստորագրվել է ԵՄ-Ուկրաինա Ասոցացման համաձայնագրի քաղաքական բաժինը: Մոլդովան և Վրաստանը առաջընթաց են արձանագրել քաղաքական և դատահիրավական բարեփոխումներում և պատրաստվել Ասոցացման համաձայնագրերի իրականացմանը: Վրաստանի 2013թ-ի աշնան ընտրությունները արձանագրել են իշխանության երկրորդ ժողովրդավարական փոփոխությունը: Հայաստանը շարունակել է իրականացնել ժողովրդավարական բարեփոխումները, սակայն որոշել է հետաձգել Ասոցացման համաձայնագրի, այդ թվում՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների համաձայնագրի ստորագրման նախապատրաստական աշխատանքները:: Ադրբեջանը շարունակել է անլուրջ վերաբերվել հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդման կոչերին: Բելառուսը քաղաքական բարեփոխումներում որևէ առաջընթաց չի գրանցել:

Արևելյան գործընկեր երկրներից շատերում զգալի առաջընթաց է գրանցվել շարժունակության և միգրացիայի ոլորտում, և 2013թ-ի հունիսին առաջին շարժունակության գործընկերության համաձայնագիրն է ստորագրվել հարավային գործընկեր Մորոկոյի հետ, իսկ երկրորդը՝ Թունիսի հետ, 2014թ-ի մարտի սկզբին:

ԵՀՔ երկրների հասարակության հետ գործընկերության շրջանակում՝ Եվրամիությունն ամրապնդել է համագործակցությունն ու աջակցությունը քաղաքացիական հասարակությանը, որը շարունակում է կարևոր դեր խաղալ:

Յոթ տարիների ընթացքում, ԵՀՔ գործընկեր երկրներին տրամադրվող տարեկան աջակցությունը հասել է ամենաբարձր շեմին 2013թ-ին՝ կազմելով 2.65 միլիարդ եվրո: Երկամյա բանակցություններից հետո՝ 2013թ-ի դեկտեմբերին, համաձայնեցվել են 2014-

2020թթ. ֆինանսական ծրագիրը և հարակից գործիքները, այդ թվում՝ նոր Եվրոպական հարևանության գործիքը (ԵՀԳ): Չնայած ֆինանսական ճգնաժամին, հարևանության համար նախատեսված ֆինանսական աջակցությունը կազմում է 15.4 միլիարդ եվրո, ինչը հաստատում է ԵՄ հանձնառությունը և հարևանությանը տրվող առաջնային կարևորությունը:

**Լրացուցիչ տեղեկություններ.**

Եվրամիության ընդլայնման և հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի կայքէջ: http://ec.europa.eu/commission_2010-2014/fule/index_en.htm

ԵՄ անվտանգության քաղաքականության և արտաքին գործերի բարձր ներկայացուցիչ Եվրահանձնաժողովի փոխնախագահ՝ Քեթրին Էշթոնի կայքէջ. http://ec.europa.eu/commission_2010-2014/ashton/index_en.htm

Եվրոպական Հանձնաժողով. Եվրոպական հարևանության քաղաքականություն

http://ec.europa.eu/world/enp/index_en.htm

http://www.enpi-info.eu

Համատեղ հաղորդագրությանը ծանոթանալու համար ստուգել ԵԱԳԾ կայքէջը http://eeas.europa.eu/enp/index_en.htm

## ԵՀՔ – երկրների զեկույցներ.

Ալժիր http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-219_en.htm

Հայաստան http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-220_en.htm

Ադրբեջան http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-221_en.htm

Բելառուս http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-222_en.htm

Եգիպտոս http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-223_en.htm

Վրաստան http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-224_en.htm

Իսրայել http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-225_en.htm

Հորդանան http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-226_en.htm

Լիբանան http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-227_en.htm

Լիբիա http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-228_en.htm

Մոլդովա http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-229_en.htm

Մորոկո http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-230_fr.htm

Պաղեստինի օկուպացված տարածքներ http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-231_en.htm

Սիրիա http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-232_en.htm

Թունիս http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-233_fr.htm

Ուկրաինա http://europa.eu/rapid/press-release_MEMO-14-234_en.htm